ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE
AND SPORT
DEPUTY MINISTER

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Ֆաքս /факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, escs.gov.am

N02/09.1/46088-2026

«Մեդիա հանուն կրթության» ՀԿ-ի նախագահ
ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(Էլ. փոստի հասցեն՝ mediaforeducation.ngo@gmail.com)

Ի պատասխան Ձեր՝ 2026թ. հունվարի
նոյեմբերի 23-ի գրության

Հարգելի՛ Անուշ Մարտիրոսյան

Հայտնում եմ, որ հանրակրթության բովանդակության փաստահեն վերանայումը կրթության որակի ապահովման և շարունակական բարելավման գործընթացի բաղկացուցիչ մասն է:

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ հաստատված՝ հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգով նախատեսված է, որ հանրակրթության պետական չափորոշիչը կարող է վերանայվել ուսումնական հաստատություններում չորս տարին մեկ անգամ իրականացված վերլուծության արդյունքների հիման վրա: Այսպիսով՝ գործող կարգավորումն արդեն իսկ նախատեսում է չափորոշչի վերանայման հնարավորություն՝ արձանագրված արդյունքների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա:

Միջազգային և ազգային գնահատումների, քննությունների, ինչպես նաև չափորոշչի ներդրման ընթացքի ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն են տալիս գնահատելու սովորողների փաստացի ձեռքբերումների համապատասխանությունն ակնկալվող վերջնարդյունքներին, բացահայտելու ուսումնառության ընթացքում առաջացող դժվարությունները և որոշակիացնելու բարելավման

կարիք ունեցող ուղղությունները: Նման վերլուծությունները փաստական հիմք են ձևավորում կրթության բովանդակության վերանայման անհրաժեշտությունը գնահատելու և համապատասխան փոփոխություններ մշակելու համար:

Մասնավորապես, վերլուծությամբ բացահայտված խնդիրների բնույթից կախված՝ կարող են հստակեցվել առարկայական ծրագրերի բովանդակությունն ու թեմաների հաջորդականությունը, վերանայվել ուսումնական նյութի ծավալն ու բաշխումը, կատարելագործվել դասագրքերը, ուսումնամեթոդական նյութերը և գնահատման գործիքները: Վերլուծության արդյունքները կարող են կիրառվել նաև ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքները որոշակիացնելու և մեթոդական աջակցությունն առավել նպատակային կազմակերպելու համար: Հետևաբար, վերլուծությունների գործնական նշանակությունն արտահայտվում է դրանց հիման վրա հիմնավորված որոշումների ընդունմամբ և կրթական գործընթացի շարունակական լավարկմամբ:

Նշված աշխատանքներն իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և համապատասխան կառույցների ընթացիկ գործառույթների, առկա մասնագիտական ու կազմակերպական ռեսուրսների և նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակում, ուստի այս գործընթացի համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:

Այսպիսով՝ նախատեսվող մեխանիզմը միտված է գնահատումների և ուսումնասիրությունների արդյունքների համակարգված կիրառմանը՝ ապահովելով արձանագրված արդյունքների, դրանց վերլուծության և հանրակրթության բովանդակության բարելավման միջև շարունակական կապը:

Восстановимая подпись

Ստորագրող
ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
6509930519

X

2026-11-26 23:25:29 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: BABAJANYAN ANNA 6509930519 ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Կատ.՝ Անի Խաչատրյան
Հանրակրթության վարչության
հանրակրթության և արտադպրոցական
կրթության քաղաքականության մշակման և
վերլուծության բաժին,հեռ.՝ 010-599-699/519/